Ալեքսանդր Ծատուրյան

Երկրի մշակներ

Օ՜, ծանր հոգսերի խղճո՛ւկ զավակներ,
Որքա՜ն համբերող, քաջ է ձեր հոգին.
Տանջվում եք անվերջ-օրեր, տարիներ.
Կարծես, տանջանքն է միայն ձեր բաժին . . .
Մանուկ օրերից ձեր մեջ ապրելով,
Վկա եմ եղել ձեր շա՜տ ցավերին.
Տեսել եմ, ինչպես տանջանքի գընով
Դուք հաց եք տալիս հայրենի երկրին:
Տեսել եմ, ինչպես հուսալից, զվարթ
Դուք մշակում եք անմշակ դաշտեր.
Ինչպես տանջանքում անլաց, անվհատ
Դուք երգ եք երգում — վաստակի՜ երգեր:
Տեսել եմ, ինչպես ամառվա շոգին,
Երբ կրակ է թափում արևառ երկինք,
Ոսկեշող արտում, մանգաղը ձեռքին,
Դուք մեջք խոնարհած թափում եք քրտինք:
Տեսել եմ, ինչպես գունաթափ աշնան
Հայրենի երկրի կուրծքը պատռելով,
Այնտեղ թաղում եք, գանձերի նման,
Ոսկի՜ հատիկներ, ոսկի՜ հույսերով . . .
Տեսել եմ գարնան սիրուն օրերին,
Պայծառ արևը դեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալեծուփ արտերի մոտին

Ձեզ ծունկ խոնարհած՝ ջերմ աղոթելիս:
Տեսել եմ, ինչպես և՛ ցուրտ, տաղտկալի
Ձմռան գիշերներ նստած խրճիթում,
Հոգնած ձեռքերիդ դադար չե՛ք տալի —
Խոփն եք նորոգում, մանգաղը սրրում . . .
Եվ այդպես ազնիվ գործին անձնվեր
Ապրում, տանջվում եք անբավ հոգսերում,
Եվ ձեր տանջանքում, հերո՛ս-մշակներ,
Արդար վաստակն է ձեզ ոգևորում:
Օ՜, հայրենիքիս քրտնաջա՛ն որդիք,
Որքա՜ն համբերող, քաջ է ձեր հոգին,
Ձեզնո՛վ է միայն կանգուն հայրենիք.
Համբո՜ւյր ու օրհնա՜նք ձեր սուրբ վաստակին: